



Հաստատված է

ԵՊՀ գիտական խորհրդի
2017թ. մարտի 2-ի թիվ 5 նիստում

ԵՊՀ գիտական խորհրդի նախագահ,
Ա. Հ. Սիմոնյան
«2» մարտի 2017թ.

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ ՈՒ Ն
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Գիտական քաղաքականության վարչությունը (այսուհետ՝ վարչություն) Երևանի պետական համալսարանի (այսուհետ՝ ԵՊՀ) կառուցվածքային ստորաբաժանում է:
2. Վարչությունը գործում է ՀՀ օրենսդրությանը համապատասխան՝ ԵՊՀ-ի և սույն կանոնադրության հիման վրա:
3. Վարչությունը սահմանված կարգով կարող է ունենալ դրոշմակնիք՝ (հայերեն, ռուսերեն, անգլերեն [եզուներով]), պաշտոնաթուղթ (բլանկ) և անհատականացման այլ միջոցներ:

II. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

4. Վարչության խնդիրներն են.
 - 4.1. ԵՊՀ ստորաբաժանումների գիտահետազոտական աշխատանքների համակարգումը և դրանց առնչվող ընթացակարգերի մշակումը,
 - 4.2. Տեղական և միջազգային նշանակության գիտաժողովների ծրագրման և համակարգման աշխատանքների աջակցության ցուցաբերումը,
 - 4.3. ԵՊՀ գիտահետազոտական ստորաբաժանումների աշխատանքային պլանների և ծրագրերի մշակման գործընթացի կազմակերպումը և կատարման վերահսկումը,
 - 4.4. ԵՊՀ գիտահետազոտական ստորաբաժանումների աշխատողների, անձնական գործերի հավաքագրումը, կազմումն ու հաշվառումը, նրանց վերաբերյալ հրամանների նախագծերի պատրաստումը,
 - 4.5. ԵՊՀ գիտաշխատողների մրցութային եղանակով պաշտոնների տեղակայման և ատեստավորման գործընթացի կազմակերպումն ու վերահսկումը,
 - 4.6. ԵՊՀ կառուցվածքային ստորաբաժանումներին գիտական ծրագրերի, դրամաշնորհների վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը,

4.7. ԵՊՀ գիտահետազոտական ստորաբաժանումների գիտական ծրագրերի հայտերի ներկայացումը և դրանց կատարման նկատմամբ վերահսկման կազմակերպումը,

4.8. Դրամաշնորհային ծրագրերով գիտական նախագծերի ձևակերպման և ներկայացման աջակցության ցուցաբերումը, փաստաթղթերի պատրաստումը և դրանց կատարման ընթացքի համակարգումը,

4.9. ԵՊՀ աշխատողների գիտական աշխատանքների էլեկտրոնային հավաքագրումը, մշակումը և վերլուծությունը,

4.10. Մտավոր սեփականության պաշտպանությանն ուղղված իրավական փաստաթղթերի նախապատրաստումը, արտոնագրային ծառայության գործունեության համակարգումը,

4.11. ԵՊՀ-ում առկա գիտական սարքավորումների գույքագրումը և չափագիտական ծառայության կազմակերպումը,

4.12. ԵՊՀ գիտական անձնագրի պատրաստումը,

4.13. Վարչության գործունեությունից բխող այլ խնդիրների իրականացումը:

III. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

5. Վարչության անմիջական համակարգումն իրականացնում է ԵՊՀ գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտորը:

6. Վարչության կառավարումն իրականացնում է վարչության պետը, ում պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է ԵՊՀ ռեկտորը:

7. Վարչության պետը՝

7.1. կազմակերպում և վերահսկում է վարչության գործունեությունը, ապահովում է վարչության հիմնական խնդիրների և գործառույթների իրականացումը և լուծում դրանից բխող հիմնախնդիրները,

7.2. համապատասխան ցուցումներ և հանձնարարականներ է տալիս վարչության աշխատողներին,

7.3. սահմանված կարգով տնօրինում է վարչության ֆինանսական միջոցները,

7.4. ստորագրում է վարչության կողմից պատրաստվող փաստաթղթերը,

7.5. ներկայացնում է վարչությունը ներհամալսարանական և արտահամալսարանական հարաբերություններում, վարչության անունից հանդես է գալիս պետական մարմիններում և այլ կազմակերպություններում,

7.6. պատասխանատվություն է կրում վարչության առջև դրված խնդիրների պատշաճ և արդյունավետ լուծման համար,

7.7. լուծում է վարչության կանոնադրությունից բխող և վարչության գործունեության հետ կապված այլ հարցեր:

IV. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8. Վարչության վերակազմակերպումը կամ լուծարումն իրականացվում է ԵՊՀ-ի կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով սահմանված կարգով:

9. Սույն կանոնադրության մեջ փոփոխություններն ու լրացումները կատարվում են ԵՊՀ-ի գիտական խորհրդի կողմից՝ ԵՊՀ-ի կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով սահմանված կարգով: